Կարգապահական գործ թիվ ԿԳ-25085

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԵՓՐԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Գուրգեն Թորոսյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Կարեն Խալաթյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Վահե Հարությունի Եփրիկյանին (արտոնագիր՝ թիվ 2322), **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի դատավոր՝ Գիվի Հովհաննիսյանը (**այսուհետ՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**) հայտնել է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվում է թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Ռուբեն Սուրենի Հովհաննիսյանի 18.04.2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վարույթով մեղադրյալի շահերի պաշտպանությունն իրականացնում է փաստաբան Վահե Եփրիկյանը (**այսուհետև՝ Փաստաբան**):

Փաստաբանը 09.06.2025թ. ժամը՝ 15:30-ին հրավիրված դատական նիստին չի ներկայացել և դատարան չի ներկայացրել դատական նիստին չներկայանալու վերաբերյալ փաստաթղթեր, ինչը հիմք է հանդիսացել վերջինիս չներկայանալն անհարգելի համարելու համար:

Թիվ ԿԳ-25085-2-Ա
21.01.2026թ.

Բացի այդ, Փաստաբանը չի ներկայացել 05.09.2025թ. ժամը՝ 15:30-ին հրավիրված դատական նիստին: Նիստերի քարտուղարը զանգահարել է Փաստաբանին՝ պարզելու չներկայանալու պատճառների վերաբերյալ, սակայն վերջինս հայտնել է, որ վատառողջ է, սակայն որևէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Դատարանը Փաստաբանի վարքագիծը գնահատել է անհարգալից վերաբերմունք դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ և չներկայանալը համարել անհարգելի:

Դիմողը 19.09.2025թ. ներկայացրած դիմումով հայտնել է, որ Փաստաբանը 12.09.2025թ. ժամը՝ 13:00-ին նշանակված դատական նիստին կրկին չի ներկայացել՝ լինելով պատշաճ ծանուցված:

Դիմողը խնդրել է փաստաբան Վահե Եփրիկյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 26.11.2025թ. ներկայացրել է թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով 09.06.2025թ., 05.09.2025թ. և 12.09.2025թ. դատական նիստերի արձանագրությունները:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Վահե Եփրիկյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գիվի Հովհաննիսյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 11.11.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 26.11.2025 թվականին ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ 05.09.2025 և 12.09.2025 թվականներին նշանակված դատական նիստերին չի մասնակցել վատառողջ լինելու հանգամանքով պայմանավորված, ինչի մասին հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել էր Դատարանին:

Փաստաբանը հավելել է, որ 05.09.2025 թվականին Դատարանին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է դիմում՝ անդրադառնալով դատական նիստին ներկայանալու անհնարինության մասին:

Փաստաբանի պնդմամբ, ինքը հեռախոսակապի միջոցով տեղեկացրել է Դատարանին 09.06.2025 թվականի նիստին ներկայանալու անհնարինության մասին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 13.10.2025 թվականի թիվ 300-Ա/ԿԳ-25085 որոշմամբ փաստաբան Վահե Եփրիկյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

16.10.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Հայկ Ծատուրյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 16.12.2025թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-4-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 16.12.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 21.01.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով Փաստաբանը հանդիսանում է ամբաստանյալ Ռուբեն Սուրենի Հովհաննիսյանի պաշտպանը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով դատական նիստերի ձայնագրություններով:*

2. Թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով 09.06.2025թ. ժամը՝ 15:30-ին նշանակված դատական նիստին Փաստաբանը չի ներկայացել, իսկ նրա բացակայությունը Դատարանը

համարել է անհարգելի: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով 09.06.2025 թվականի դատական նիստի ձայնագրությամբ:*

3. Թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով 05.09.2025թ. ժամը՝ 15:30-ին նշանակված դատական նիստին Փաստաբանը չի ներկայացել, նախապես հեռախոսազանգի միջոցով տեղեկացնելով Դատարանի, որ չի կարող ներկայանալ դատական նիստին վատառողջ լինելու պատճառով, ինչպես նաև Դատական նիստից հետո ժամը 17:53-ին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել էր դիմում՝ բացակայության պատճառների մասին, սակայն Դատարանը նրա բացակայությունը համարել է անհարգելի և անհարգալից վերաբերմունք դատավարության մասնակիցների նկատմամբ: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով 05.09.2025 թվականի դատական նիստի ձայնագրությամբ:*

4. Թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով 12.09.2025թ. ժամը՝ 13:00-ին նշանակված դատական նիստին Փաստաբանը չի ներկայացել, իսկ նրա բացակայությունը Դատարանը համարել է անհարգելի: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով 12.09.2025 թվականի դատական նիստի ձայնագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Վահե Եփրիկյանը փաստաբան է հանդիսանում 12.12.2017 թվականից, և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում ունեցել է մեկ կարգապահական տույժ, որը մարվել է:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Վահե Եփրիկյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 4.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

պատշաճ ծանուցմամբ հրավիրված անձը պարտավոր է վարութային գործողության կատարման վայր կամ դատական նիստի ներկայանալ նշանակված ժամին կամ վարույթն իրականացնող մարմնին նախապես իրազեկել չներկայանալու պատճառների մասին: Անհարգելի պատճառով չներկայացած անձի նկատմամբ կարող են կիրառվել սույն օրենսգրքով նախատեսված հարկադրանքի միջոցներ: Վարութային գործողությունը կամ դատական նիստին անձի մասնակցությունը խոչընդոտող հիվանդությունը հաստատող փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը սահմանում է առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմինը:

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ այդ թվում դատարանների և այլ մարմինների առջև, որտեղ փաստաբանը ներկայացնում է վստահորդի շահերը: Այս հարաբերություններում փաստաբանը պետք է հարգանքով վերաբերվի այն մարմիններին, որոնց հետ նա առնչվում է, պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, ինչպես նաև արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ ... Պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից

Քննարկելով Փաստաբանի վարքագիծը վերը նշվածի համատեքստում՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք Փաստաբանը ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով հանդիսանում է պաշտպան.

2. արդյո՞ք Փաստաբանը ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված է եղել.

3. արդյո՞ք Փաստանանը ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով նշանակված և Դիմումում թվարկված դատական նիստերին չի մասնակցել հարգելի կամ անհարգելի պատճառներով:

Պատասխանելով վերը թվարկված առաջին և երկրորդ հարցադրումներին Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը թիվ ՀԿԴ/0256/01/24 քրեական գործով իրականացրել է մեղադրյալի շահերի պաշտպանությունը և պատշաճ ծանուցված եղել է

թվով 3 դատական նիստերի մասին: Այս փաստերը համարվում են հաստատված նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք չեն վիճարկվել Փաստաբանի կողմից:

Ինչ վերաբերում է երրորդ հարցադրմանն այն մասին, թե արդյո՞ք Դիմումում թվարկված դատական նիստերին Փաստաբանը չի մասնակցել հարգելի կամ անհարգելի պատճառներով, ապա Փաստաբանի կողմից վկայակոչվել է այն փաստը, որ ինքը չի մասնակցել 05.09.2025, 09.06.2025 և 12.09.2025 թվականներին նշանակված դատական նիստերին՝ վատառողջ լինելու հանգամանքով պայմանավորված, ինչի մասին հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել է Դատարանին:

Փաստաբանը չի ներկայացրել իր կողմից վերը նշված երեք՝ 05.09.2025, 09.06.2025 և 12.09.2025 թվականների դատական նիստերին հարգելի պատճառներով չմասնակցելու մասին որևէ ապացույց: Բացի այդ, Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց վերը նշված դատական նիստերին չներկայանալու վերաբերյալ դատարանին տեղեկացնելու մասին՝ բացառությամբ 05.09.2025թ. ժամը՝ 15:30-ին նշանակված դատական նիստի:

Հանձնաժողովը հաշվի է առնում, որ 05.09.2025թ. դատական նիստի վերաբերյալ Փաստաբանը նախապես տեղեկացրել է դատարանին իր չներկայանալու մասին, ուստի նշված դրվագն առանձին հիմք չի դիտարկվում կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար: Սակայն այդ հանգամանքը չի վերացնում այն, որ Փաստաբանը չի ներկայացել 09.06.2025թ. և 12.09.2025թ. նշանակված դատական նիստերին՝ չկատարելով դատարանի կանչով ներկայանալու իր պարտականությունը, ինչն ինքնին վկայում է դատարանի նկատմամբ անարգալից վերաբերմունքի և կարգապահական խախտման առկայության մասին:

Անդրադառնալով կարգապահական խախտման դրսևորման մեղքի ձևին՝ Հանձնաժողովը փաստում է, որ Փաստաբանը չի մասնակցել դատական նիստերին դիտավորությամբ:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանների կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ և այն հանգամանքը, որ Փաստաբանի գործողությունները չեն առնչվում վստահորդի հետ հարաբերություններին, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասի պահանջներով՝ Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահե Հարությունի Եփրիկյանի (արտոնագիր՝ թիվ 2322) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25085-2-Ա
21 հունվարի 2026թ.
ք.Երևան